

Դարձրութիւնն ՄԵԾ ԽՀ-ի ամեն նիկուց Միասցելովից (իւ բ որդին)։
Խշան կռառանդին Պետրովից զաքան
Օրահնապաւրիին։

Զօրագիտ Պլատոն Ա. Ամալյով .

Պատկեր զնողագիւռ

Bdellomyces Uppalana

Պատկերահան Փիլիպով:

1 590 000 000 000 000 000 000 000 000 000 000 000 000 000 000 000 000

Մայր Աթոռոյ Յ. Եղմիածնի Յ. Գէպ-
գեան Հեմարանի աշակերտքը մէկ ամ-
սէ ի վեր աչքերուն տառջն տեսնելով
մօտերս Օսմանեան Հայուստանէն այս
կազմերս բերուած հայկազանց խեղճ
և թշուառ վիճակը զեղեցիկ զգաց-
մանը և քրիստոնէավայել մարդասի-
րութեամբ՝ ինքնազօժար կամաք ցան-
կացան ըստ իւրեանց կարողութեան
փառքիկ ոգնութիւնն մի անել այն թր-
ուառներուն ուստի իւրեանց մէջ 67
րուրի փող հաւաքեցին և ձեմարանի
կարգապահ Պ. Գալուստեանի միջոցաւ ի
21 ն ամսոյս ներկազացուցին Վ. Կ. Մ-
փառ Հայրապետի Ազգիս որ շատ ու-
ստիացաւ աշակերտաց այնպիսի զեղե-
ցիկ զգացմանց և զնացից վերայ զ-
ից նոցաւ այս առաջին քայլը իւրաք-
չարձաթեան ասպարիզին օրէնից զի-
ւինքը և հաւաքեած 67 րուրին յանձ-
նից Մինոցին որ ինովաստ վերայիշեալ մե-
րազնեայ զաղթականաց:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԽԱՐԴԻՑ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ
ԹԵՂԴՈՒՐԵԱՆ.

Յունիս ամսոյ $\frac{1}{15}$ ին վախճանուեցաւ Փարփառմ
Ազգիս բնողիամբութեան լու յայտնի բազմարդին եւ
ակեզարդ Թէօպորիան Ապրօփի վարդապետը իւր 97—
ամեայ հասակում ժամանակին եւ հմուտ անմանց
Թողնելով արժանացիշատակ հանգու ցեղոյ լիակատար
կենացքութեան պատրաստութիւնը։ աւելորդ չեմ
համարում յիշել այստեղ համառօտապէս նորա զա-
րաւոր կեանքի նշանաւոր անցքը և Թագման հանգէսու

Հայր Սարգիս վարդապետը ծնուել է Հայաստանի
Բաղեշ քարգարում (Տամբկաստան) անցեալ դարու փեր-
ջերում: Արգէն մանկու Թեան հասալից ի վեր ուսման
մեծ եռանդ ցուցանելով եւ մկարողանարով միապէս կա-
տարել այդ վափագր իւր ծնողների անձնուննասաւ-
Թեան պատմառով՝ երիտասարդ Սարգիս զնում
հասնումէ մինչեւ Վենետիկի միարանու Թեան Ա. Պա-
զարի վաճրը: Ա. յատեղ իւր ուսմունքը լրացնելով մեծ
յառաջադիմու Թեամ՝ մանուանդ հայկական լեզուի
մէջ: Եւ սոտանարով եկեղեցական այլ եւ ար ասաբ-
մաններ: Երիտասարդ վարդապետը մկումէ այսու-
մետեւ Նշանաւոր զիռ խաղով Աթիֆարեան միարա-
նու Թեան զործերի մէջ: Զարմանալի ազգամիրական
և անզով բորբոքուած՝ թէուգորեսանը միանգամացն
նուիրումէ իւր անձը իւր սիրելի Ազգին Անա սզգ
ազգամիրական եռանդն էր որ յորդորեց նորան եր-
կու անզամ մեռաւոր եւ տաժանելիք մանապարձոր-
դու Թիւն կատարել ի Հնդկաստան արժանայիշատակ
Սամուէլ Մուրասով կոտակը կատարելու համար: ահա
դոյն այդ եռանդն էր որ նորան սզի եւ համբերու-
թիւն կատար մաքառել այն վիշաերի եւ նեղութիւն-
ների մեռ: որը կերէր շատ տարբիների ընթացրում
մանաւ անդ Աթիֆարեան միարանու Թեան Առ-
տեան վարժարանը հաստատերու եւ կառավարերու
զործոյ մէջ: Այս անցերերի պատմու Թիւնը արգէն
յայտնի է Հայ բնմերցող հասարակու Թեան հանգու-
ցելոյ բրանաշխատ չորս հասուր «Պատմու Թիւն Մու-
րասունան վարժարանի» անունով զրբից: պատեղ բա-
ւական է յիշել որ՝ Հայր Սարգիս՝ ինչպէս երեւում
մնացած մեռացիր Աղմերէն՝ հասուցած է Աթիֆա-
րեան միարանու Թեան յիշեալ ուսումնարանիր

համար մօտ երեք միլիոն ֆրանկ (համարեա մէկ միլիոն մանէթ, ո.ուրիշ) գումար: Հարիւրաւոր նամակներ, որը կան արժանայիշատակ հանգուցելոյ զրասեղանում, ցուցանումն որ նա մինչեւ իւր վերջին շունչն զրադաւած է եղել Մուրատեան վարժարանի խնդրով:

Լուսաւորչական ծնողներէն ծնուած եւ ապա Մը-իմիթարեան միաբանութեան մէջ առ ի հարգիւ կա-մոլիկ դարձած՝ Հայր Թէոդորեանը իւր դործունէու-թիւնը յատկացուցած էր միշտ ամբողջ ազգի շա-ներին, առանց կրօնական խորութեան: Բայց տես-ներով որ Միմիթարեանը սկսեցին հետդիէտէ շե-զուրի ազգասիրական ուղղի ճանապարհն՝ աշխա-տերով աւելի ազգը կաթոլիկ դարձնելու՝ քան թէ նո-րա ընդհանուր յառաջադիմութեան նպաստելու, եւ քաշ համոզուած լիներով որ առանց կրօնական հա-րազատութեան մայրենի եկեղեցուն չէ կարելի հա-րազատ որդի լինել հայրենինաց, արժանայիշատակ Հայր Սարգիս վարդապետը զեց բացարձակապէս օ-տար կաթոլիկ կրօնը եւ վերադարձաւ մայրենի Հայ-աստանինաց Ս. Եկեղեցւոյ ծոցը միւս երեք ընկերների, այն է՛ Հայր Ամբրոսիոս եւ Հայր Խորէն Գալֆա-յեանների եւ Հայր Գարրիէլ Ա. յակաղովսրու հետ, բայց միանդամայն առանց որ եւ իցէ ակնկալու-թեան կամ փառախնդրութեան, որոյ ապացոյցն այն է որ՝ մինչեւ նորա ընկերներից ոմանք պմնեալ զարդարեալ են եկեղեցական եւ արքունի շքանշան-ներով, եսլիակոպասական բարձր աստիճաններով, արդիւնաւոր պաշտօններով եւ հարուստ ու փա-ռաւոր կենաքով, սա այս ազնիւ եւ ժրաշան մշակը ազգաշինութեան, իւր հարիւրամեայ կեանը կնքու-մէ վարդապետութեան համեստ աստիճանով եւ աղ-քաստութեան մէջ:

Հայր Թէոդորեանը արժանաւոր տեղ ունի նաև ազգային մասենազրութեան մէջ մինչ ցարդ հրատա-րակուած զրաւոր աշխատութիւններով, որոց մէջ առաջին մեղք անշուշտ պատկանումէ նորա «Պատ-մութեան Մուրատեան վարժարանի»: Ցաւային այս է որ՝ ինչպէս տեղեկացանք հանգուցելոյ իրեղինները ցուցակազրող անձինքներէն՝ ոյմնչ նշանաւոր ծեռա-զիր աշխատութիւններ չեն երեւում նորա զրասե-զանում: Առումն թէ՝ հանգուցեալը թողել է միայն 4) մօտ երեք հարիւր նամակներ, որոց բավանդա-

կութիւնը ըստ մեծի մասին վերաբերվում է Մու-րատեան վարժարանին եւ մի քանիսը արդին տրա-ւած են յիշեալ «Պատմութեան» մէջ. 2) մի միջակ ծեռազիր տետրակ բառզիրը Ֆրանսերէն — Հայերէն, 5) մի նոյնպիսի բառզիրը աւելի համառօս. 4) մի տետրակ կիսատ Յիշատակարան Մուրատեան վար-ժարանի. 5) մի համառօս տումար այլ եւ այլ ծա-խուց, եւ 6) մի փոքր տետրակ մանր յօդուածներով եւ գիտելիք վերնազրով: Նաեւ լուսմենք թէ հանգու-ցեալը իւր կենդանութեան ժամանակ սորան եւ նո-րան տուած է եղել իւր աշխատասիրութիւնները մաքուրը արտազրելու համար, բայց այդ պարուննե-րը արդեօր հաւատարմաքար ի յայտ կածեն իւրեանց յանձնուած զրուածքները՝ թէ ոչ:

Արժանայիշատակ Հայր Սարգիսը նուիրելով բո-րբովին իւր անձը Ազգին՝ միանդամայն մոռացել էր սեփական օգուտները, միլիօնաւոր գումարներ անցներով իւր ծեռքէն՝ վերջին տարիններում զտան-գումէր աղքատութեան մէջ: Բայց բարեբախտաբար ազգի մէջ գեւս եւս պակաս չեն աղնուամիտ մար-դիկ, որք բազցը եւ սուրբ պարտք համարելով պահ-պանել եւ միսիթարել ազգի ժրաշան մշակները՝ մեկ-նումն նոցա իւրեանց օդութեան ծեռքը: Այսպէս եւ Հայր Թէոդորեանը վայելել է շատ տարինների ընթացքում Փարիզում բնակուող Մեծապատիւ Մա-նանեանի եւ Վսեմափայլ Գէորգ թէյ Երամեանի ինաւակալութիւնը ստանալով զրամաւոր նպաստ բաւական վայելուչ ապրուստի համար: Նոյն Մեծ-Երամեանը յանձն էր առել հանգուցելոյ թաղման ծախրը, որ եւ կատարուեցաւ բաւական շրեղ հան-դէսով: Որովհետեւ Փարիզում չկայ ոչ հայկական ա-զօթատուն եւ ոչ բահանայ, ուստի հեռազրով հրա-ւիրուած էին Մանչեստերի Գերապատիւ Փիրզակէմ-եան Ղեւոնդ վարդապետը եւ Գերապատիւ բաս-տամեան Վահան վարթապետը, որը արդէն զնա-ցած էր ի Գերմանիա: Հանգստեան կարգը եւ օծման հանդէսը կատարուեցաւ հանգուցելոյ բնակարանում, ուր պատրաստուած էր եկեղեցական սեղան պատ-կերներով, խաչերով, չահերով եւ այլ ամենայն պա-րագաներով: Հանգուցեալը դրած էր զագայի մէջ զգնատաւորուած սաղավարդով եւն. շուրջառների պակասութեան պատմառով երկու վարդապետը ծաղկեաց փիլմներ ունէին ուսմին եւ վեղարներ:

Յծումը կաստարելուց յետոյ բարեշնորհ Վահան վարդապետը բնաբան առնելով հետևեալ խօսքերը «Արտակ մեզ գամմա յերկինս, ուր ոչ գող մերձենայ և ոչ ցեց ապականէ»՝ մի համառօտ սրտաշարժ գամբանական ճառ ասաց, որով ցոյց տուեց թէ ինչպէս հանգուցեալը հետեւելով Քրիստոսի այդ պատուերին միշտ հետամուտ է եղել առաքինի եւ աղջային գործերին, մոռանալով իւր անձնական օգուտները եւ ապրելով միշտ եւ մեռնելով աղքատութեան մէջ: Թաղման հանդիսին ներկայ էին համարեա Փարփղի բոլոր հայերը թէ արք եւ թէ կանայք, ներկայ էին նաև Տաճկաստանի գեսապանատան առաջն քարտուղարը, Պարսկաստանի զինուորական նախարարի օգնական գօրապետ հայազն Զանկիր խանը, Վանմափայլ Օտեան Էֆէնտին, եւ քանի մի նշանաւոր Գաղղիացիք: — Բոլորի ուշադրութիւնը գրաւեց այն հանգամանքը որ՝ Մուրատեան վարժարանում նստող Միհթարեան Աբրահամ եւ Աթանազին վարդապետները, որը հրաշիրուած էին առանձին տոմսակով, ներկայ չէին թաղման ժամանակ. կասեն թէ իրը հրաման խնդրել են Փարփղի Արքեպիսկոպոսից, բայց նա արգելել է. ահա մեր լուսաւորեալ Միհթարեանների զգուելի կրօնամոլութիւնը:

Մի սեւազգեստ կառք ամպհովանով եւ ինչն այլ սեւազգեստ կառքերը, նաև մի քամի սովորական կառքերը կազմումէին հանգուցելոյ յուղարկաւորութեան հանդէսը. գաղաղի վերայ սփռած պատուական շուրջառը դրաւումէր բազմաթիւ փողոցների խուռն անցուղարծ անողների ուշադրութիւնը եւ հետաքրքրութիւնը: Մարդինը ամփոփուեցաւ Փարփղի նշանաւոր գերլաշէկ անունով գերեզմանոցում: Գերեզմանի վերայ երիտասարդ ուսանող Պարոն Պէլլերեանը ասաց մի համառօտ, բայց շատ սրտաշարժ ճառ, որը վերջաբանեց այսպէս. «Տասն օր, պարուներ, զիշեր եւ ցերեկ, սոյն արժանայիշատակ հանգուցելոյ անկողնի մօտ էի. եւ սա մինչեւ իւր վերջին շունչն կրկնումէր թէ ես այլ քան չունիմ կտակելու ազգին բաց ի Մուրատեան վարժարանէն, եւ խնդրումնմ ազգէն եւ նորա Հայրապետէն, որ այդ վարժարանին կենդանութիւն տան եւ միհթարեն ազգի որը եւ աղքատ մանուկների վիճակը եւ Սամուէլ Մուրատի լիշտակը»:

Այսպէս ուրեմն այս բազմավաստակ եւ բազմարդիւն մշակը նուիրելով իւր ցամեայ գործունէութիւնը ազգին, կնքումէ իւր վերջին վայրկեանը դարձեալ ազգի վերայ մտածելով: Տեսնենք նրբ կըկատարուի յիշեալ սուրբ եւ վսեմ կտակը:

Աւարտելով սոյն տիսուր նամակը, հարկաւոր եմ համարում յիշել որ՝ Փարփղի գերեզմանատունները այնպէս լի են, որ այժմ գերեզմանատեղը ծախումէ քաղաքն մի որոշեալ ժամանակով, որոյ լրանալուց յետոյ մարմինը հանոււմն եւ ուղարկումնն քաղաքից հեռաւոր տեղեր, այնտեղ թաղելու համար: Հանգուցեալ Սարգիս վարդապետի գերեզմանը դնուեցաւ տասը տարի ժամանակով: . . .

Վերջում հարկաւոր է հրապարակական չնորհակալութիւն յայտնել Պ. Պէլլերեանին, Պ. Թիւյսիւզեանին, եւ մանաւանդ Պ. Թութվանեանին, որը մեծ հոգացողութիւն ունեցած են հանգուցեալ Թէոդորեան Սարգիս վարդապետի վերայ թէ հրւանդութեան ժամանակ եւ թէ Թաղման կարգադրութեան համար:

* * *

Ի 44 — 25 Յ-Ն-Ե-Ւ 1877 թ.

Ի Փարէւ:

Ի ԵԳՐԵՒԵՆԴՅՅԻ ՀԵՅՐ.

Արդէն մերազնէից յայտնի է՝ որ Բագրեւանդ գաւառի (Ալաշկերտ, Հ. — Պաեազիտ եւլն.) 14 — 18ի չափ գիւղորայիցմէ հասուածեալ եւ այս կողմերս բերուած են՝ որքան ստուգել կարելի եղաւ. 5 - 600 տուն Հայեր, եւ բոլորը ազետալի եւ թշուառ դրութեան մէջ կտագնապին եւ ծայրագոյն յուսահատութեան հասած կհեծեն դառնապէս:

Թողումք նոցա տնաւերեալ վիճակը՝ եւ ստացուածոց ու ապրանաց յափրշտակուիլը, յիշեմք միայն բազմաց՝ իւրեանց բազմաթիւ սիրելիներէն զըրկուի-